ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА “АРЦАХИ АМАЛСАРАН”

Հրատարակվում է 1994 թվականից

 # 1(188) հունվար-փետրվար, 2016թ.

ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ԱՆՑԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հունվարի 21-ին տեղի է ունեցել Արցախի պետական համալսարանի խորհրդի նիստ, որին հրավիրված էին համալսարանի գիտական խորհրդի անդամները, պրոֆեսորա-դասախոսական կազմը և ուսանողության ակտիվը:

Նիստը վարում էր ԱրՊՀ խորհրդի նախագահ, ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանը:

Նիստի աշխատանքներին ներկա էին ԼՂՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար Մարատ Մուսայելյանը, կրթության, գիտության և սպորտի նախարար Սլավիկ Ասրյանը, պաշտոնատար այլ անձինք, համալսարանականներ:

Ներկաները լսել են ռեկտոր Մանուշ Մինասյանի հաշվետվությունը՝ 2014-2015 ուսումնական տարում իրականացված աշխատանքների մասին:

Ներկայացնելով 2014-15 ուստարում կատարած աշխատանքները՝ ռեկտորը նշել է, որ համալսարանը շարունակել է խթանել ուսանողների, դասախոսների մտավոր և անձնային որակների զարգացումը՝ իր նպաստը բերելով հանրության տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի բարեկեցության բարձրացմանը:

Ըստ ռեկտորի հաշվետվության՝ 2014-2015 ուսումնական տարում ԱրՊՀ-ն մասնագետներ է պատրաստել 32 մասնագիտությունների գծով. 8 ֆակուլտետի 23 ամբիոնի միջոցով, որտեղ դասավանդել են 196 հիմնական դասախոս, որից 18-ը՝ պրոֆեսոր, 70-ը՝ դոցենտ, 58-ը՝ ավագ դասախոս, 35-ը՝ դասախոս:

«2014-2015 ուս.տարում որոշակի աշխատանքներ են իրականացվել ժամանակակից պահանջներին համապատասխան ճկուն ուսումնական ծրագրեր և մասնագիտություններ ունենալու ուղղությամբ: Մշակվել են նոր մասնագիտությունների ուսումնական պլանները, անհրաժեշտ փոփոխություններ կատարվել գործող պլաններում: Մասնագիտությունների ցանկի վերաբերյալ համալսարանի առաջարկությունների հիմքում դրվել են պետական քաղաքականության առաջնահերթությունները, աշխատաշուկայի ուսումնասիրության արդյունքները, դիմորդների նախասիրությունները և համալսարանի իրական հնարավորությունները»,- նշել է ռեկտորը:

Խոսելով համալսարանում ծավալված գիտական գործունեության մասին՝ բուհի ղեկավարը նշել է, որ այս բնագավառում համալսարանի հիմնական նպատակը շարունակում է մնալ նրա գիտական ներուժի ուղղորդումը տնտեսության զարգացմանը և հասարակության բարեկեցության բարձրացմանը, դասախոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներում: Այս առումով, սակայն, հաջողությունները քիչ են:

Փոխարենը համագործակցության առումով առաջընթացը շոշափելի է. մայր բուհը, ընդհանուր առմամբ, համագործակցային պայմանագրեր ունի շուրջ 25 բուհերի հետ: Հաշվետու ուսումնականում հետևողականորեն առաջ է տարվել եվրոպական կրթական դաշտին ներգրավվելու քաղաքականությունը՝ զարգացնելով համագործակցությունը հեղինակավոր այնպիսի բուհերի հետ, ինչպիսիք են Լյովենի կաթոլիկ համալսարանը, Բասկերի Երկրի համալսարանը, Յագելոնյան համալսարանը, Տարտուի համալսարանը և այլն: Քննարկման փուլում է Ֆրեզնոյի պետական համալսարանի հետ գործակցության համաձայնագիրը:

«Բուհի գործակցությունը դրսևորվել է փոխադարձ այցելությունների, ուսումնամեթոդական նյութերի փոխանակման, նոր գրականության տրամադրման, դասախոսությունների վարման, գիտաժողովների և հոբելյանական այլ տարեդարձներին նվիրված միջոցառումներին ակտիվ մասնակցության, ուսանողական կառույցների ակտիվ գործակցության, ամառային հանգստի կազմակերպման և այլ ձևերով»,- հավելել է Մ. Մինասյանը:

Չնայած ուսանողների հանդեպ պատասխանատվությունը, նրա ուսումնագիտական ձեռքբերումները, բավարարվածությունն ու հաջողությունը ԱրՊՀ գործունեության առանցքային հիմնադրույթներից են, այնուամենայնիվ, ռեկտորի խոսքով, ուսանողի մոտ հետազոտական ու ստեղծագործ աշխատանքի, քննադատական ու վերլուծական մտածողության զարգացման և ընդհանրապես նրանց նախաձեռնողականության զարգացման առումով անելիքներ դեռևս կան:

Արցախի պետական համալսարանի ղեկավարության գործունեության առանցքից դուրս չեն մնացել նաև համալսարանականների սոցիալական վիճակի բարելավման հարցերը: Այս ուղղությամբ, ըստ ռեկտորի հաշվետվության, ևս իրականացվել են որոշակի աշխատանքներ:

Նիստի ընթացքում լսվել է նաև գլխավոր հաշվապահ Ն. Գրիգորյանի՝ ԱրՊՀ ՊՈԱԿ 2015 ֆինանսական տարվա արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ

ԱրՊՀ Գիտական խորհրդի փետրվարի 29-ի նիստում քննարկվել են ԱրՊՀ ՊՈԱԿ 2016-2017 ուսումնական տարվա վարձավճարների տարեկան չափերն ու օրակարգային այլ հարցեր:

Օրակարգային հարցերից առաջինը վերաբերում էր ԱրՊՀ 2016-2017 ուսումնական տարվա բակալավրիատի, մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերի վարձավճարների տարեկան չափերին: Ռեկտոր Մանուշ Մինասյանը գիտխորհրդի անդամներին ներկայացրեց հաջորդ ուսումնական տարվա նոր մասնագիտություններն ու դրանց վարձավճարների տարեկան չափերը, նաև հստակեցվեցին արդեն գործող մասնագիտությունների վարձավճարները:

Վարձավճարների չափերն ընդհանուր առմամբ փոփոխությունների չեն ենթարկվել, սահմանվել են «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների վարձավճարները՝ համապատասխանաբար 300 և 350 հազար դրամ:

Նիստի ընթացքում գիտխորհուրդը հաստատել է նախկինում ընդունված մի քանի կարգերում կատարված փոփոխությունները: Այսպես, «Ուսումնական աշխատանքների հաշվառման նորմերում» հստակեցվել են ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի վերահանձնման ժամանակ ղեկավարի վարձատրության հետ կապված ուսանողի ֆինանսական պարտավորությունները: Համաձայն ընդունված կարգի՝ ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի վերահանձնման դեպքում շրջանավարտը կցվում է համապատասխան ամբիոնին և ստանում նոր թեմա: Վերահանձնման դեպքում ավարտական աշխատանքի ղեկավարը վարձատրվում է 20.000 դրամի չափով, իսկ մագիստրոսական թեզի ղեկավարը՝ 45.000 դրամի չափով:

Ըստ մեկ այլ կարգի, եթե ուսանողը 1-5-րդ կիսամյակներում եզրափակիչ գնահատումով ավարտվող դասընթացից մինչև եզրափակիչ քննությունը հավաքել է 2-ից ցածր միավոր, ապա ուսանողին, իր դիմումի համաձայն, հնարավորություն է տրվում կրկնել տվյալ դասընթացը 2-6-րդ կիսամյակներում (հաջորդ ուսումնական տարում համապատասխան կուրսի հետ, անհատական ծրագրով, հեռակա ուսուցման համակարգի ուսումնական պարապմունքների ժամանակ): Հակառակ դեպքում՝ ուսանողը տվյալ կիսամյակի քննաշրջանից հետո հեռացվում է: Ոչ ավարտական կուրսի առավելագույնը 12 կրեդիտ ակադեմիական պարտք ունեցող ուսանողներին իրավունք է վերապահվում մինչև ավարտական կուրսի ուսումնական տարվա սկիզբը մարելու առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը՝ վճարովի հիմունքներով վերահանձնելով դրանք ևս մեկ անգամ կամ կրկնելով դասընթացը: Դասընթացների կրկնման համար ուսանողը պարտավոր է վճարել համապատասխան կրեդիտի դիմաց:

Նիստի ընթացքում լսվել են բնագիտական ֆակուլտետի աշխարհագրության, ընդհանուր և կիրառական ֆիզիկայի, կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնների 2014-2015 ուսումնական տարվա հաշվետվությունները, հաստատվել գիտխորհրդին կից գործող հանձնաժողովների տարեկան աշխատանքային պլանները:

Այլ հարցերի շրջանակներում գիտխորհուրդը երաշխավորել է ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ Շուշանիկ Սաղյանի «Հայոց լեզվի պատմության» երրորդ հատորի տպագրությունը: